


ՏՆՕՐԵՆ-ՆՍՐԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐՈՒ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Վ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե. ի. Գառաի համար տեղի. ուղ. դճ. 30
վեցամսեայ 50
Պ. Ե. Երկրեմե տեղի. ուղ. դճ. 25
վեցամսեայ 14
Բ. ի. Գառաի ծախար խմբագրու.
թիւն վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նա.
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՕՐԻՆԱԽՈՐ ԶԱՆԲԱՆ

—Ինչո՞ւ. թաղականներուն դէմ չէք
գրեր:

Ահա թէ ի՞նչ կըսեն և կամ թէ ի՞նչ
կը գրեն մեզի այն Աղեքսանդրիացիները ու
րոնք թաղային գործերով զբաղելուն մէջ հա-
ճոյք մը կըզան: Եւ մանկական չքմեղու-
թեամբ մը կը կարծեն թէ յրազրութիւնը
անպատճառ թաղականները դատաւրեւելու
մէջ կը կայանայ:

—Է՛յ, ըսէ՛ք տեսներ, կը փորձուինք
իրենց հարցնել, այդ աղաները ի՞նչ կընեն
կոր, և կամ ինչո՞ւ դժգոհ էք իրենցմէ:

—Էֆէնտիմ, զեղծումներուն չափը չկայ,
ուղածին կընեն կոր. հարցնող փնտռող չի
կայ, բան մըն է կերթայ կոր:

—Շատ աղէկ, երթալիք թէ իրա-
ւունք ունիք, բայց ձեռու չիք ի՞նչ ապացոյց
ունիք որ թաղականները զեղծումներ կընեն
կամ եկեղեցիին անտուկին հետ այնպէս կը
վարուին ինչպէս Ֆրա Տիափօլօ կը վարուէր
լեռան վրայ ճամբորդողներուն հետ:

—Ընեն նէ մեզի՞ պիտի ըսեն, գուր
յրադրապետ էք, այդ ձեր գործն է:

Եւ երբ նեղը մնան, շատ անգամ մին-
չու իսկ երեսնու համարձակած են ըսել թէ
թաղականները մեզի հետ հաշտ երթալու ե-
ղանակը գտած են՝ իրենց գործերը չի քն-
նադատելու համար:

Իրաւ է որ մենք Աղեքսանդրիոյ թաղա-
կանները իբրեւ տիպար—վարչապետներ չենք
նկատած երբեք, սակայն պատճառ մը չու-
նինք անտեղի յարձակումներ ընելու անոնց
դէմ պարզապէս gallerie զրօցներու հա-
մար:

Գիտենք նաեւ թէ մէկէ աւելի թերու-
թիւններ ունի այդ խորհուրդը իր գործելու
եղանակին մէջ, և թէ շատ աւելի արդիւ-
նաւոր կերպով կրնար վարել այն պաշտօնը
որուն փակած է... ինչպէս թիթեռնիկները
վարդերուն:

Բայց այդ պղտիկ մեղքերը խոշորացոյ-
ցով մեծցնելու ճարպիկութիւնը մեր հզօր կող-
մը չէ, և մարդկային թերութիւններէ նոյն իսկ
թաղականները զերծ չըլլալուն համազուած
ենք շատոնց: Սակայն ոչ հաճոյք կըզանք և
ոչ ալ պատշաճ կը գտնենք անօգուտ յար-
ձակումներ ընել մարմնայ մը դէմ որուն մէջ

աղգասէր և պատուաւոր անհատներ կը գըտ-
նուին:

Այդ հակաթաղականները սրճարանին
մէկ անկիւնէն կամ բազմոցի մը մէկ ծայրէն
կրնան քննադատել առ ու ան և կամ զրօս-
նուլ հոսհոսութեամբ, բայց լրագրողը ամեն
բանէ առաջ չըլճայեաց ըլլալու է և յար-
գելու է իր և ուրիշներուն արժանապատուու-
թիւնը:

Բանքասանքը կանայի չըթուէնքներու հրա-
պոյր մը ևս կաւելցնէ, գիտենք. բայց երբ
թաւ պիտի մը տակէն դուրս կուգայ՝ պղտի-
կութիւն մը ենթադրել կուտայ արտի և
տկարութիւն մը հոգւոյ. երկու բան որոնցմէ
շատ կը խորշինք:

Աղեքսանդրիոյ թաղականները մեր Բե-
նեամիսները չեն: Անգամ մը ևս կը կրկնեմք
Բայց անոնց հակառակորդները մենէ ապա-
սելու չեն ոչ կուտակեցողութեամբ ոչ և ոչ կողմ-
նակալ քննադատութիւն:

Եթէ թաղեցիները մեզի պէս մտածէին,
փոխանակ հեռուէն քաջքշելու, շատ աւելի
օգտակար գործ մը պիտի ընէին իրենց բո-
ղոքները—ահագին քանակութեամբ բողոք
ունին անոնք— ներկայացնելով Պօլոս փաշա
Նուպարի՝ իրենց նախագահին որ գերազան-
ցապէս նախանձախնդիր է, լուրջ և կա-
նոնաւոր վիճակի մէջ տեսնելու այն գործե-
րը որոնց վերին հոկոյութիւնը իրեն յաճնուած
է այնքան տարիներէ ի վեր:

Եթէ թաղականները հաշիւ չեն տար,
ինչ որ շատ անիրաւ բան է, թո՛ղ գիմում
ըլլուի ուր որ անի է և տարակոյս չկայ որ
գահացում պիտի արուի իրենց:

Գործենք, բայց չի բանքասանք:

Եւ եթէ երբեք ապացոյց չի ձեռին և
կամ բանաւոր բողոքներ ունեցողներ կան,
որուն դէմ կուգէ թո՛ղ ըլլայ, Փառոսի սիւ-
նակները միշտ բայց պիտի ըլլան անոնց առջի:

Այս է լրագրութիւնը:

Ծ Ա Ղ Կ Ե Մ Ա Ր Տ

Առանց արտօնութեան կամ բողոքի, ես
ալ կուգամ յայտնել իմ կարծիքս՝ որ ծաղիկաբոյ
կործանող եկեղեցի մտնելուն հակառակ է բողոքողին:
Վարդին կամ գամկիային բանաստեղծական յատ-
կութիւնները թուելով չարագարացունք բնու ա-
նոնց գործածութիւնը մեր բաճկոնակի բլրակին
վրայ: Այս ճամբով, Ֆրաք հագած տաճար մտնելը
քարոզողներ այ պիտի գտնուին մէկ օր: Ասոր վեր-
ջը ո՛ր կերթայ:

Մեր աղգային ու կրօնական աւանդութիւննե-
րէն շատը օտարներու ձեռքով քանդուած պահու-
ն, Պարսկաստանէն Սմերկայ, Եւրոպայէն Եգիպ-
տոս, ամեն երկիր, ամեն քաղաք, ամեն անկիւն
զաղթած հայերուն մէջ նորոգուած ու խորթ սո-
վորթներու ծաւալման վտանգին առջեւ, լաւ չըլ-
լար որ գոնէ ժողովրդային բարեպաշտութեան հետ-
քերը մենք ինքնաբերաբար ջնջելու չեղենք: Ես
մինչեւ իսկ պիտի փնտռէի հին բարի ժամանակնե-
րը ուր հաւատացեալներու բազմութիւնը փախթի
վրայ կը ծնրաղբէր, առանց ակնոյ կամ նստարան
ունենալու իր կռնակը Եգիպտոսի մէջ մանաւանդ
շատ վտանգաւոր է ասանկ նորութիւններ փոր-
ձելը, վստահ հետզհետէ ուրիշներու ծնունդ կու-
տան. Պոլսոյ եկեղեցիներուն մէջ, որինակի համար,
բուական տարիներէ հետէ քանաքէն յաջորդած է
միլիոններ, հոգեւորական իշխանութեան արտօնու-
թեամբ, բայց անկից անդին չեն անցնիր ու ո՛չ որ
խորհած է վճարեալ թիկնաթոս ալ գետեղել
տաճարին մէջ, մինչդեռ հո՞ս...

Ասանկ ալ եթէ Եգիպտոսի հոյ գաղութին մէջ
սովորութեան կարգ անցնի ծաղիկաբոյնով պատա-
րաքի ունիւղբերը, վաղը մէկու օր մենք աղգային
մէկուն խելքին կը փչէ հասոյթի աղբիւր մը գտնել
առոր մէջ ու ծածուկ բազմ տաղաւոր մը հաստա-
տել միւսիւ Սթամբուլ վարժ տաղաւորներուն ձեռ-
քով պուհներ վաճառել տալու համար:

Այս ենթադրութիւններ հեռուները կրնան տա-
նիլ զմեզ, և Փառոս կարճ պատմութեան միայն
կենդանի, և իրաւամբ: Կարճ խառնով՝ ո՛չ մեր և
կեղեցական կարգ ու սարքը, ոչ մեր բնածին բա-
րեպաշտութիւնը չեն հաշտուիր այդ տեսակ վարա-
վելիկ նորութիւններու հետ. տաճարին մէջ մեր
խուռիկ ծիսերը ու մոմը վառենք, աղօթենք կամ
մոտափախ կենանք. ուրիշ միջավայրեր կը պիտի
ինքզինքս փայլեցունել ուզելու ծաղիկաբոյնի մը
բուրմոմը կամ տեղափոխ:

Ա.Բ.ՆԵՄՍՈՒ

Ինչ հարկ այսքան արժուէ հանել ծաղիկաբոյն-
ջին շուրջը. բուրգոյն չըլլա՞ր ուշադրութիւնիդ
գարծունել գաւազաններուն վրայ որոնցմով եկեղեցի
կը մտնեն մեծ ու պղտիկ. բանկալը ինչո՞ւ հոս-
տատուած է. Ժողովուրդները ինչո՞ւ հոս կեցած են.
Ես նախաձեռնար պիտի սեպի որ այս խնդիրը հրա-
պարակ հանելիք, բայց կը վախճանամ որ Ծաղիկաբոյն
տիտղոսին հետեւողութեամբ՝ Գաւազանաւորտը կը
ստեղծուի, ինչ որ տառաջնին չափ հաճելի չէ:

ԲԱՆԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԵԱՑ ՄԷ

ՎԵՐԼԵԼՄ Բ.Ի ԱՅՅԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Գերմանիոյ կայսեր Երուսաղէմ ուղեւո-
րելուն առթիւ, Սուլթանը—կըսէ Թաւնի մէկ
թղթակիցը— առանձն առանձինք հազար
զինուոր պիտի խրկէ Պէրութ ուսկից յամաքի
ճամբով Երուսաղէմ պիտի կրթան: Պէրութի
և Դամասկոսի տեղական իշխանութիւնը հարկ
եղած գումարներն ստացեր են նոր հազուստ-

ներ պատրաստելու համար զինուորներուն , որպէս զի լաւ տպաւորութիւն մը թողուն Վիլհէլմ Բ-ի վրայ :

Նոյն թղթակիցը վերապահութեամբ լուր մը կը հաղորդէ թէ Սուլթանը մտադիր է եղբոր իր վեհափառ հիւրին ընծայել այն պատմական գետինը ուր կը գտնուէր Վերնատունը և որուն երուսաղէմի զանազան քրիստոնեայ հասարակութիւնք ի զուր ջանացած են տիրանալ ցարդ :

Դարձեալ, Գերմանիոյ կայսեր ուղեւորութեան առթիւ, կը ծանուցուի Կ. Պոլսէ թէ յանձնաժողով մը կազմուել է պաշտօն ունենալով Պաղեստին ուղեւորիլ և այդ դաւառը բնակող 1500 գերմանացիներուն անշարժ կալուածներուն ցուցակը պատրաստել : Այդ կալուածներ անմիջական կերպով միջոցի պիտի վերածուին , առանց ո՛ր և է ծախքի , ինչ որ մեծ առաւելութիւն մըն է : Յայտնի է արդարեւ որ վազմ կալուած մը միջոցի վերածուելու համար ահագին ծախքերու պէտք կայ և անոնք որ գիտեն թէ Տաճկաստանի մէջ վազմ կալուածի մը ժառանգորդները ինչ գոյնաւորութիւններու և արգելքներու կը հանդիպին , պիտի գնահատեն այս անօրինութեան առաւելութիւնները : Եւ որովհետեւ այս հաճոյակատարութիւն միմիայն ի նպաստ գերմանացիներու կը կատարուի , բնական է առնջութիւն մը նշմարել Սուլթանին այս որոշման և Վիլհէլմ Բ-ի մօտաւոր այցելութեան միջեւ յերուսաղէմ :

Ա Ռ Ի Մ

Վերջապիսին՝ որ ա՛յլ չունի հրապոյր, Գայլերս կ'ուղղուի Նեղոսն ի վեր յամբարաց, Ու ինչպէս շոյք կը խնդրէ խեղճ մի կոյր, Կը փրկեցուի հետքերն Անոր որ գնաց :

Բան մը հիմակ չը հաղորդիր սոսիս հետ, Ծաղիկն անբոյր, ո՛չ ալ քոչուց կը խօսի, Ամեն հմայք եղաւ յանկարծ, ո՛հ, անհետ, Յորմահետ հետքերն Անոր կորուսի :

Ձեռք չոր կմախք ծառերն ինձի կ'եռեան, Ու ամպերէն կարծես արցունք կը հոսի, Անբոյսալ քուի ինձի ամեն բան, Յորմահետ հետքերն Անոր կորուսի :

Տրտում քիտուր, քայլամուր, յուսահաս, Հոգիս քուտա, սիրքս խոցոս, աչս ի լաց, Նեղոսն ի վեր կը պրտքոյն անբոյսալ, Փրկեցուիմ հետքերն Անոր որ գնաց . . .
30 Յունուար 98 Ե.

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն Յրանժօրքէր Ձայքունկի ուղեւորած հեռագրի մը նայելով, նախարարական փոփոխման զրոյցներ կը շրջին նորէն և հաւանական կը նկատուի որ թնդանօթարանի վերաանուել Ձէքի փաշա Սատրազամ անուանուի : Այդ պարագային մէջ, չէյիս էլ հիւտա պիտի անուանուի եղբոր Շէյխ-Իւլ-Իսլամ, պալատան զինուորական գիւանին պետ Շաքիր փաշա՝ պատերազմական նախարար և Հիճազի կուսակալ Ահմէտ Բաթիպ փաշա՝ ծովային նախարար :

—Յունաստանի Եօրկիոս իշխանը Կրէտէի կառավարիչ անուանելու առաջարկէն զատ, զոր կը մերժէ Սուլթանը , Կ. Պոլսոյ ռուսա-

կան գետապան Պ. Ջինովիէֆ առաջարկած էր նաեւ որ Համիտիէ քիւրտ հեծեալազորները հեռացուին անդրկովկասեան սահմանագլխէն. այս երկրորդ առաջարկն ալ սա հետեւանքն ունեցեր է որ այդ հեծեալազորներու թիւն աւելցունել հրամայեր է Սուլթանը և պատմական շաններ խրկեր է անոնց հրամանատարներուն ու սպաններուն :

Կըսուի թէ Ռուսիա , ասոր փոխարէն , ծանուցագիր մը պիտի տայ Դրան , 1877ի պատերազմի տուգանքէն մնացած մասին վըճարումը պահանջելով :

—Կրէտէն կը հաղորդեն թէ Քանէլարօ ծովակալը գանգատու է որ Քանտիաի թուրք իշխանութիւնք պէտք եղած հակողութիւնը ի գործ չեն դնել : Տեղւոյն կառավարիչը պատասխաններ է թէ իր տրամադրութեան ներքեւ գտնուած զօրքերն անբաւական են 50,000 բնակիչ ունեցող քաղաքի մը մէջ բարեկարգութիւնը պահպանելու : Քանտիաի թուրքերուն կողմէ վերջերս գործուած յարձակումներուն հետեւանօք , քսան պաշտպաններ ձերբակալուելու անգլիական Հոս մարտանաւին մէջ բանտարկուել են . ասոր վրայ , 2000ի մօտ իսլամներ կառավարական պաշտօնատան առջեւ ցոյց մը ըրեր են, բարձրաձայն պահանջելով բանտարկեալներուն արձակումը . խանութները փակուել են և չիթութիւն մը ծագեր է :

Սուտայի ծովախորշը գտնուող անգլիական և իտալական մարտանաւերուն հրամանատարները յունուար 23ին Քալիպէս գացեր են , Կրէտէի ընդհ. ժողովի ատենապետին հետ : Այս այցելութեան նպատակն է հանգարտութեան հրապարակ Սթրաքսոնի բնակիչները :

—Դերմանիոյ արտաքին գործոց նախարար Պ. Փօն Պիւօֆ՝ երկուսուսուցի խորհրդարանական յանձնաժողովին մէջ օրուան քաղաքական խնդիրներու վրայ խօսելու առթիւ, յայտարարեր է ի մասին Կրէտէի թէ այդ գործին մէջ Դերմանիոյ միակ շահն է որ կղզին անհամաձայնութեանց առարկայ չըլլայ տէրութիւններուն միջեւ ոչ ալ նոր մտահոգութիւններու և խռովութիւններու դուռ բանայ Արեւելքի մէջ :

—Աթէնքէն Հալասի հեռագիր մը հաղորդեց երէկ թէ Լաճարինայի (*) մէջ զէն ի ձեռին կռիւ մը տեղի ունեցեր է գիւղացիներու և տաճիկ զինուորներու միջեւ որոնք կողքին տուրք հաւաքել :

—Կ. Պոլսէն կը հաղորդեն թէ օսմ. թըլթատարութիւնը Թեսալիոյ յատուկ մասնաւոր նամակադրօմներ պատրաստել կուտայ որոնց հասցիքը պիտի յատկացուի՝ վերջին պատերազմին մէջ մեռած կամ վիրաւորուած թուրք զինուորականներու ընտանիքին :

—Ռուսական Նովոսթի լրագրին նայելով, Տրէֆիւսի գատին մէջ մատ ունեցող տէրութիւնը Յրանսայի բարեկամ եղող պետութիւն մըն է որ զուտ քաղաքական պատճառներու համար կը շահագրգռուէր գիտնալ Յրանսայի ճշգրիտ կացութիւնը . Հետեւաբար Տրէֆիւսը իր մատնիչ մը նկատելու չէ , այլ պարզապէս պետական գաղտնիք գողցող մը : Այդ գատին վերաքննութիւնը անհրաժեշտ կը դառնայ , կը յաւելու Նովոսթի :

Հ Ա Մ Բ Ո Յ Ր Ը

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Դող մի՛ ելլար . աս ձեր գիտցած յօդուածն էրն չէ :

Այս պարկեշտ աղագարութենէս ետքը, պատճառ մը չեմ տեսներ չսխտու համար յօդուածս որուն ընթերցումէն անմիջապէս վերջը պիտի հաւատուի թէ որքան մեծ ծառայութիւն մը մատուցանել ուղած եմ ձեզի եթէ երբէք կը տառապիք . . . ստանձնելու ցաւ :

* * *

Անշուշտ յօդուածիս վերնագիրը՝ Հոյսիչ —ինչ պէս որ է , — վայրկեան մը վարդապետն էր երային , բանաստեղծական, խոհալ գաղափարներ ծնեցուց ձեր գանկին տակ ու արտին մէջ և պահ մը կարծեցիք թէ նորաձեւ մըն էր որ պիտի կարգայիք որուն մէջ հատկանշներ, պաշտիներ պիտի ըլլային տիպուած :

Որքան հեռու ենք . . . Սիրոյ, համակրութեան, գորգուրանքի այդ ընթացիկ դրամին՝ համարյոյն վրայ , ընդհանրապէս , այնքան լրջօրէն, այնքան խոհեմ կերպով պիտի խօսիմ որ պիտի կարծէք թէ Բաթիէօրն է որ կը ձուռէ իր միջոցներուն վրայ, Զօրան է որ կը պաշտպանէ Տրէֆիւսը, Գուրգէնն է որ կը բանտարկուէ և կամ Հանօթօնն է որ կը լսացատրէ փրանքօ-ռուսական գաղափարները :

Գիտեմ, պատրանքը սոսկալի պիտի ըլլայ երբ փոխանակ հոլութեան շեշտերով, համարյոյն մտորեցուցիչ հմայքը, և կամ զգլխիչ հրապարակ ձեռք բացատրելու, որուն իսկ մը մէջ փաթկուած ձուռ զատ բժիշկի մը պէս ձեռք ըսեմ թէ գերման գիտնական մը փորձերով հաստատած է թէ համարյոյն միակ գեղն է որ կրնայ բժշկել խանգարեալ ստաւ մօրս մը և զիբայցեւ մարդուս մարտդական գործողութիւնը :

Միևնոյն պատրանքը ես ալ ունեցած եմ երբ օր մը, —այս օրուան պէս միտքս է— երկուս գեղանի և տառն անգամ շնորհալի տիկին մը իր ձեռքովը դաւաթ մը բոնետը մեծարեւելէ կէս ժամ վերջը, խօսակցութեան մը միջոցին կը յայտարարէր թէ բոնետը ըմպելի մըն է զոր կը շինեն ինչ կօշիկներու նրբանէն քաղուած հիւթով մը . . . :

Թեւեթոն գիտնականները բանաստեղծութիւնը կը մեղցնեն կոր. մեզք :

Համարյոյն ինչեցեւ դեղահատի մը տափակութեան, ինչ սրբապղծութիւն :

Ուրեմն ասկէց ետքը համարյոյն՝ իր նախնական և անուշ կիրառութենէն շեղեցնելով պարզ գոհիկ բան մը պիտի ըլլայ Ժէնօտելի լսած խնդրանքն, չօրուէյի դեղահատներուն և Բաթիէօրի չէղուկին պէս : Երթներու հոլումէն փոխանակ սէր կաթելու , մարտդական գործիքին մը առաջ պիտի գայ . . . :

Չ'սիրածիս չափ կան սա գերման գիտնականները :

Ենթադրել չի տուու համար թէ զուտ ֆանթազի մըն է որ կը յերկրեմ պատեղ թող տուէք որ թարգմանեմ ձեզի տօքթ. Ֆրից Մէյէրի, ոյդ համարյոյն ասան առողջարանին քանի մը տողերը :

«Համարյոյն շարժութեան, սկիզբի ինչ և կամ՝ սկիզբի փոխիչ աւելի կարգէ մարտդական վրայ : Երթներու հոլումէն փոխանակ սէր կաթելու , մարտդական գործիքին մը առաջ պիտի գայ . . . : Զ'սիրածիս չափ կան սա գերման գիտնականները :

Շէք չէ՞ աս գիւտար :

Ըստ հաճոյս մանչ կամ աղջիկ գուտակ ունենալու գիւտը տար քով սրբան կը նստանայ կոր :

Կարնա թաւիլով capitoné եղած շրթներու կտուցի հարուած մը տալու համար —Զե՛ս գիտեր որքան բեղ կը սիրեմ— կըսէինք : Աւա՛ղ հիմա —կե-րածս չի կրցայ մարտեղ, պաշտի մը, — պիտի ըսենք մեզի սիրելի եղող արարածներուն :

Ասկէց ետքը կեսնքը ինչ կարծէ, ըսէք :

Այս գերմանական գիւտին շնորհիւ ինչ յեղու չըլլումներ յառաջ պիտի գան արդեօք մեր ընկերական բարեբերուն մէջ :

Ամուսին մը յանկարծ սենեակէ մը ներս պիտի խոսէ ձիւղ այն վայրկեանին ուր Տիկինը առողջապահիկ փորձ մը ընելու վրայ է իր բարեկամին հետ ըստ տօքթ. Ֆրից Մէյէրի գրութեան :

—Վա՛յ թշուառական, չա՛ցցած, վերջապէս . . .

—Է՛յ ինչ կը պոռաս կոր, ինչ է եղբոր, միւսին կերածը չէր մարտեղ կոր տէ :

ՏՈՒՔԹ. ԲԷԱՆ, ժրանագի նշանաւոր
վիրապոյժը, մեռեր է կիրակի օրը ի Բարիդ:

ԿԻՊՐՈՍ կղզին պատերազմական պ-
ռաջնակարգ կայան մը դարձունելու պատ-
րաստքիւններ կը սեւնէ Անգլիա: Կղզիին
կարեւոր մէկ ծովագրին վրայ նաւարան մը
պիտի հաստատուի ինչպէս նաեւ զինուոր-
ներու յասուի ընդարձակ քանակեցող մը:
Այս ծրագրին նպատակն է Արեւելի Մաշ-
քան դարձունել Կիպրոսը որ այնքան կա-
րեւոր դիրք մը ունի Միջերկրականի մէջ:

ՅՐԱՆՍՍՈՒՄԻ մէջ, որ հակահեռական
շարժում մը կը տեսնուի այս միջոցիս, ընդ ա-
մենը 71,200 հրեայ կան, ինչ որ շատ փոք-
րիւ մը կը կազմէ բաղդասմանք երկրին ժո-
ղովուրդին որուն քիւն է երեսունը ութ
միլիոն: Փոխադարձաբար, Յրանագի շար-
ժումն հարստութեան (որ է 80 միլիառ Լր.)
20 միլիառը հրեաներուն ձեռքը կը գրե-
նուի: Ահա ո՛ւր է Մովսէսի զաւկըներուն
գործքիւնը:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Երեքշաբթի, դեկտեմբերի 30ին, երեկո-
յեան 7 ժամին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը
մուտք գործեց Թիֆլիս: Վեհափառ Կաթո-
ղիկոսին կայարանում դիմաւորեց Թիֆլիսի
ստորկանապետը: Կայարանում հաւաքված
էր բաւական բազմութիւն: Երկաթուղու գնաց-
քից դուրս գալով Վեհափառը նստեց կառք
և հասաւ Վանքի եկեղեցին՝ ժամը 7.40ին:
Վանքի մօտ սպասում էր ամբողջ Թիֆլիսի
հոգեւորականութիւնը: Փողոցում, Վանքի բա-
կի դրան առաջ, կանգնած էր մեծ բազմու-
թիւն, որը Վեհափառի գալուստը ողջունեց
կեցցէններով: Կաթողիկոսը մտաւ տաճար, ա-
ղօթեց և ապա մտաւ առաջնորդարան, ուր
դիմաւորեցին նրան Ներսիսեան դպրոցի հո-
գաբարձութիւնը, մամուլի ներկայացուցիչնե-
րը և մասնաւոր անձինք: Վեհափառին այցե-
լութեան եկաւ Թիֆլիսի փոխ-նահանգապետ
Կ. Ստեփանովիչ յայտնելով, որ նահանգա-
պետ Բիկով, տկարութեան պատճառով, ան-
կարող եղաւ գալ: Երէկ Վեհափառը այցե-
լեց իշխան կառավարչապետին ու փոխադարձ
այց ստացաւ: (Մշտկ)

Երկար տարիներէ հետէ Եգիպտոս հաս-
տատուած հայ մը, Հաննա Եւստաֆ Ասիս,
բնիկ Հալէպցի, որ մեռաւ նախորդ շաբթուն,
կտակ մը թողած է որով մօտաւորապէս 1000
ոսկիի մօտ գումար մը կը թողու Գահիրէի Ս.
Աստուածածին եկեղեցիին ու աղքատներուն:
Կտակին պաշտօնական բացումը պիտի կա-
տարուի յառաջիկայ ուրբաթ, Առաջնորդա-
րանին մէջ: Մանրամասնութիւնները երբ հա-
ղորդուին մեզ, կը ծանօթացունենք:

Հանգուցեալը, որ թաղուեցաւ Մարմի-
նայի ազգ. գերեզմանատունը, նիւթական
համեստ կացութեան տէր ծերունի մըն էր,
իւր ապրելու եղանակովն ալ համեստ, ա՛յն
աստիճան որ օր մը երբէք միտքէն չէր ան-
ցուցած եկեղեցիին մէջ իրեն յատուկ աթոռ
մը ունենալ... Իբրեւ ապագայ կտակարար:

ՇԵՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Տիար Պետրոս Կարապետեան և Կարա-
պետեան ընտանիքը իրենց շնորհակալու-
թիւնը կը յայտնեն ամեն անոնց որ հաճե-
ցան ներկայ գտնուիլ իրենց սղբացեալ հօր՝
ՊՕՂՈՍ Լ.ՖԷՆՏԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ հոգեհանգ-
զըստեան պաշտօնին:

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

ՏԵՈՒՐ ԱՐՁԱԳԱՆԳ ՄԸ ԻԶՄԻՐԷՆ

Յաւուր լուր մը կը հասնի մեզ Իզմիրէն: Քա-
ղաքին ծանօթ ազգայիններէն ու հարուստ վաճա-
ռականներէն Տիար Եսայի Եսայեան անցեալ շաբ-
թու գիշերանց Քիլիսէ վերադարձին, իր տան դրան
ստիպելով զաշունհար սպաննուելու է անծանօթ ձեռ-
քերէ: Այս սփիւռ, որուն շարժումիւն ու պարագու-
նէրը տակաւին յայտնի չեն, մեծ սրտայուզում յա-
ռաջ բերեր է Իզմիրի հայ հասարակութեան մէջ:

ՁԻ ԿՈՐՈՒՍԵԱՆ ԷՐ . . .

Փարոսի միջոցաւ Պաշտօնական Ազգով փրնա-
ռուող երկու ազգայիններէն մէկը, խաչիկ Բագարատ
Եօրտամեան, որ կորսուած կը կարծուէր, քաղաքիս
մէջ կը գտնուի եղբւր և Առաջնորդարան ներկայա-
նալով յայտարարեր է իր ինքնութիւնը: Կերեւայ
թէ տառնըջորս տարուան մէջ ժամանակ չէ ունե-
ցեր նամակ գրելու ծնողացը: Տառուը միւս Վերս-
ուած յին:

ԼԵՌՆ ԲԷՐԵՍԷՆԵԱՆ

Ուսեալ ու դործունեայ երիտասարդը, որ ատե-
նօք վարած է նաեւ քաղաքիս ուսումնական խոր-
հորդին ատենապետութիւնը, չի կրցաւ ճշդապիւ-
նանդօք հիւանդութենէ մը որով կը տառապէր: Յու-
ղարկաւորութիւնը կատարուեցաւ յառակից բարե-
կամեանքով յայտնութեան մէջտեղ: Կը թողու երկու
անշափահաս որբեր:

ԵՐԵՎԱՆՅԵՐ

Տիկին Մարի Պեկեան, ժիւր դերս անուէին, իրեն
ի նպատակ թատերական երեկոյթ մը կազմակերպած
է որ տեղի պիտի ունենայ առաջիկայ կիրակի գի-
շեր:

Այսօր մեծ յաջողութիւն մը կատարուի այդ
երեկոյթին համար:

Օր. Մառի Մսերեանցի նուագահանգէսը ամ-
օղջ 9ին գիշերը տեղի պիտի ունենայ Օթլէ Բօն-
թիանթոնի սրահին մէջ:

Մուտքը 10 ֆրանք է և կտրելի է տոմս գնել
Փարոսի խմբագրատունէն:

ՏԵՂԱԿԱՆ

Նախարարաց խորհուրդը իւր կիրակի
օրուան նիստին մէջ, որ գումարուեցաւ Բարձր-
Խորհրդին նախագահութեամբ, վաւերացուց
Խորհրդին շոգենաւներուն վաճառումը Ալլէն
Ալտէրալին ընկերութեան: Թէեւ ուրիշ ընկե-
թիւններ փութացած էին ոչ նուազ նշաւա-
տաւոր պայմաններով միջակից ներկայա-
նալ, բայց առաջնութիւնը տրուեցաւ վե-
րոյիշեալ անգլիական ընկերութեան: Վաճառ-
ման գինն է 130,000 ոսկի: Եղիպտական կա-
ռավարութիւնը տարեկան 6000 ոսկի պիտի
վճարէ Պ. Պ. Ալլէն Ալտէրալին, թղթատարա-
կան պայմաններու փոխադրութեան համար:
Այսուհետեւ անգլիական դրօշակը պիտի ծա-
ծանի Խորհրդին շոգենաւներուն վրայ և հա-
ւանաբար նոր պաշտօնեաներ բերուին Լանտո-
նէն, Լիվերուլթըն և Մալթայէն:

Անգլիոյ թագուհւոյն երկրորդ որդին՝
Էտիմաուրիկի դուքսը նախընթաց օր պառլյա-
մը կատարեց Մալթայի կողմը և անկից

այցելեց Հանքա գիւղը: Իրիկունը Հէլուան
վերադարձաւ:

—Օրէնսդրական ժողովին նոր շրջանը
հանդիսաւորապէս պիտի բացուի փետրվարի
10ին ի ներկայութեան Բարձր Խորհրդին և բո-
լոր նախարարներուն:

—Ելմտական նախարարութիւնը 1,800
ոսկիի գումար մը յատկացուցած է խեղճու-
թեան մէջ մեռնող կառավարական պաշտօն-
եաներու ընտանիքներուն բաշխուելու համար:

—Պոլսոյ ամերիկեան դեսպանը և Տի-
կին Անճէլ երկուշաբթի օր Գահիրէ հասան
ուր պիտի մնան քանի մը շաբաթ:

—Գահիրէի տեղական վերաբնիչ աս-
եանը երկուշաբթի օր դադարեալ արաբներէն
էլ Բալ-էլ Աւալ (հանրային կարծիք) լրագրին
դատուր, որ Խորհրդական գերդաստանին գէմ
անպատշաճ հրատարակութիւններ ըրած ըլ-
լալուն համար ամբաստանուած էր նախագատ
ատեանէն՝ 6 ամսուան բանտարկութեան և
20 եգիպտ. ոսկի տուգանքի: Դատարանը
հաստատեց սոյն վճիռը և թերթին անօրէնը՝
Աքանտար Շահին բանտ ասարուեցաւ:

—Եգիպտոսի մարաւոտանց հաշուեցոյցէն
կերեւի որ 1897 նոյեմբեր ամսուան ներա-
ծութեանց հասոյթը եղած է 1,056,580 ոսկի
և արտածութեանց հասոյթը 1,511,316 ոսկի:
Առաջինը՝ 1896ի միւսնայն ամսուան հետ բաղ-
դատմամբ 12,094 ոսկիի առաւելութիւն մը
ցոյց կուտայ, իսկ երկրորդը՝ 543,387 ոսկիի
նուազում մը:

—Տիկին Գլաւա Ուարտ, Շիմէ իշխանուհին,
3000 ֆրանքի գահարկէն դողցուցեր է: Ի՞նչ
նութիւն մը բացուած է և սպասաւորին վրայ
կատկած կայ:

—Այի փաշա Շէրիֆի ժառանգորդները
Իսմայիլիէ թաղին մէջ իրենց ունեցած ըն-
դարձակ մէկ դետինը ծախելու են ընկերու-
թեան մը որ չէնքեր պիտի կառուցանէ անոր
վրայ:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀՌՈՄ, 1 Փետրուար. — Արսաֆին գոր-
ծոց նախարարը յայտարարեց Խորհրդարա-
նին մէջ թէ Իսաղիա որ եւ է յարաբերու-
թիւն չէ ունեցած Տրեփիսի հետ:

ԲԷԴՐՍՊՈՒՐԻ, 1 Փետրուար. — Ռուսա-
կան մամուլը Անգլիոյ հակառակ լեզու գոր-
ծածեց սկսած է:

ՀԱՆՆԵԱ, 1 Փետրուար. — Քրիստոնեանե-
րուն եւ պաշտպօգոյններուն միջեւ նոր ընդ-
հարում մը տեսի ունեցաւ: Երեք հոգի մե-
ռան:

ՀՐԱԽԷՐ ՀՈՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ

Կիպրոսի մէջ վերջերս հաստատուած Ագաթակ-
նեռու շահագործման ձեռնարկին համար հայ ժիւ-
հարդորներու պետք կայ, որոնց հետ ընկերու-
թիւնը լաւ պայմաններով կապուելու տրամադրէ:
Ուստի այլ օր այս առիթէն օգտուելու կողմէ կրնայ
գիւղէլ ուղղակի առ Տիար Միքայէլ Թօփիանի ի Լառ-
նաքոս (Mr. M. Topjian, Larnaca, Cyprus) կամ
մինչեւ 20 օր Աղեքսանդրիա՝ ընկերութեան գոր-
ծակալներէն Տիար Յարութիւն Ջեմսիեանի, Թէվ-
ֆիկ լալա փողոց թիւ 3:

ԱՄՈՒՍՆԻ ՄԸ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

«Հաշիթի Տարեցոյց»ին մէջ աղջիկները հետաքրքրող գլուխ մը կայ զոր թարգմանելով մեր ամուսնախոյզ աղջիկներուն ծառայութիւն մը մատուցանելու հաճոյքէն չենք ուզեր մենք զմեզ զրկել:

Այդ գլխուն մէջ չափ էրիկին, տկար էրիկին, նախանձոտ էրիկին, ագահ էրիկին, չոպլ էրիկին, խուշառ էրիկին վրայ խօսելէ վերջը, ամուսիններու ընկերական վիճակներու վրայ հետեւեալ խորհրդածութիւնները կընէ որոնք կրնան քիչ չափ յարմարիլ նաեւ մեր ամուսնախոյզ երիտասարդներուն համար ալ:

Վաճառական ամուսինը. — Երջանկագոյն ամուսնութիւնները վաճառականական դասերուն մէջ կարելի է փնտռել, որովհետեւ առեւտուրի մէջ սիրտը բնաւ գործ չունենալուն, վաճառական ամուսինը զայն կրնայ ամբողջովին նուիրել կնոջը և այսպէսով կարելի կըլլայ երջանիկ ամուսնութիւն մը կնքել եթէ երբէք երջանկութիւնը ամուսնութեան հետ համաձայնեցնել կարելի է:

Հասառու ամուսինը. — Հոգատէրերը մանաւանդ խեղալ ամուսիններ կրնան ըլլալ: Բնութեան հետ շարունակ առնչութեան մէջ ըլլալով, քաղաքի մոլութիւններէ հեռի կը գտնուին և իրենց զգացումները անվթար պահել կարելի կըլլայ իրենց:

Երբեմն քաղաքը և երբեմն ալ գիւղը բնակելով՝ ձիեր, կովեր և սագեր կը պահեն և կանանց հետ աղէկ կը վարուին:

Առուեսագէտ ամուսինը. — Հեռու կեցէք անոնցմէ. արթիւքին սիրտը, հոգին, գլուխը, միտքը, զգացումները ամբողջն ալ իր արուեստին նուիրած ըլլալով, կնկանը կը մնայ միայն պարտքերը, հին հագուստներուն կարկուտը և էրկանը ամբողջ մոլութիւնները:


Բժիշկ ամուսինը. — Գարշա՛նք. պառկած ատենը, սեղանին վրայ, առատուն, իրկունը յանկարծ կը կանչեն, կառնեն կը տանին և ժամ մը վերջը վերադառնալով — ինչ ծի մի՛ մտենաք, ձեռքս մի՛ բռնէք կը պուռայ, փողացաւ ունեցող աղայ մը կամ հիւծախտաւոր հիւանդ մը դարմանեցի:

Վարժապետ ամուսինները. — Լաւագոյններն են... կնկան հոգի, մանկական միտք և խելօքիկ սովորութիւններ. ասկէջ աւելին սպասելու չէ:

Այս ընթերցումէն ետքը, սա համոզու մը գոյացնելու է թէ լաւագոյն ամուսինները բնաւ գործ չունեցողներն են... մինչեւ իրիշուն տունը կը նստին:

Ո՞վ կ'ը փոփոխի

Միմիայն 120 դրուց մճարելով, զնեղ ոսկի կոթէն լարաւ, խիստ սիրուն և ընտիր ժամացոյց մը թէ՛ կնոջ և թէ՛ արանց համար, թող զիմէ



Խան Խայիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձեւահիւր վէրեայէն մէջ, ուր կը գտնուին նաեւ ամեն տեսակ ոսկի, արծաթ, ոսկեպատ և նիթէլ ժամացոյցներ պատի և քոնսլի բազմազան բանախէշեր, ինչպէս նաեւ գոհարեղէնք:

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՒԱԳԵԱՆ

ԳԱԶԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական բազմազան գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով: Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ: Թարմ հաճախիք ջուրեր, անուշահոտ քիւլիք եւն. Բնաւաճակոն և մանրադիտական քննութիւնը: Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծանօթ բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնը ազատաց 23-50 համար:

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻՐԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՍՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիններով:

Ամեն մեծութեան ԱԿՐՈՆՏԻՍԸՐԱՆՆԵՐԻ 6-10

Ա. ԼՆԹՈՒԱՆ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ Վաճառատունէն Տեաքը Յովակիմեան Եզրարք այս անգամ հաստատուած են ի Գահիրէ և Մուսթի փողոցը՝ Լաթիֆի զոհարարածատան զիմաց բացած են վաճառատուն մը ուր կը ծախուին բոլորեղէն և բամբակեղէն ֆանելա, գուլպայ և գանազան տեսակ ընտիր շապիկներ, օձիքներ, քեւնոցներ:

Ճոխ գանազանութիւն մարօֆէնքրի, հոսեղէններու և արդուզարդի վերաբերեալ ամեն տեսակ ապրանք: Շեֆիլդի հոշակաւոր պողպատեայ գործիներ, անիլի, մկրաս, զմեղի եւն:

ԱՊՐԱՆԱՑ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԴԻՆԵՐԻ: Գտնուողներէն եկած յանձնարարութիւնը ճշգիւ և փութով կը կատարուին:

20-24

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԵԹԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԱՆԻ ՆԱԽԿԻ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, չրջադեղատներ, ելն. մաքրութիւն, ճշգրտահաշիւութիւն, և խիստ չափաւոր գին:

17-24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՆՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱԶԻՐԷՆ ՅԱՅԵՍԵՆԻՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ս Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	օմ նիւթ. 1,2,3 կգ.	կէս ուղ. 1,2,3 կգ.	օմ նիւթ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	օմ նիւթ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	օմ նիւթ. 1 2 3 կարգ	Էքսորէս 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանիս	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ՅԱՅԵՍԵՆԻՐԻՈՅԷ ԳԱԶԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ս Ր Ա Ն Ք	օմ նիւթ. 1,2,3 կգ.	կէս ուղ. 1,2,3 կգ.	օմ նիւթ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Խառն 1,2,3 կգ.	օմ նիւթ. 1 2 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	օմ նիւթ. 1 2 3 կարգ	Էքսորէս 1 2 3 կարգ
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանիս	ժամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱԶԻՐԷ-ՍԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԷԶ-ԳԱԶԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՒՕՏ	ԵՐԵԿՈՑ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՒՕՏ	ԵՐԵԿՈՑ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	ժամ. 12 28	7 48	» կայարան	» —	3 30
	մեկ. 12 33	7 53		Էքսորէս 1 20	7 5
Զակաղիկ	ժամ. 1 34	8 54	Իսմաիլիա	»	—
	մեկ. 1 44	9 4	Զակաղիկ	ժամ. 3 7	8 53
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —		մեկ. 3 17	9 3
Սիւէզ կայարան	ժամ. —	5 —	Պէնհա	ժամ. 4 13	9 47
				մեկ. 4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35